

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԵՖՈՐՄՆԵՐԻ ՇՈՒՐՁ
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռ. Ա. ԿՈՋՈՅԱՆ

1912—1913 թթ. Արևմտյան Հայաստանում ռեֆորմների շուրջ ծավալված դիվանագիտական պայքարը, որի մեջ ներգրավվեցին Ռուսաստանը, Թուրքիան, Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Իտալիան, Ֆրանսիան և Անգլիան, ավարտվեց 1914 թ. հունվարի 26-ին, Կոստանդնուպոլսում ստորագրված ռուս-թուրքական համաձայնագրով (ստորագրեցին Թուրքիայում Ռուսաստանի հավատարմատար Կ. Գուլկեիշը և Թուրքիայի մեծ վեզիր Սայիդ Հալիմիաշան), որը նախատեսում էր Արևմտյան Հայաստանը բաժանել երկու հատվածի (սեկտորի)՝ «հյուսիսային» (ընդգրկում էր էրզրումի, Տրապիզոնի և Սեբաստիայի նահանգները) և «հարավային» (Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքի նահանգները)։ Յուրաքանչյուր հատվածի գլուխ տերությունների երաշխավորությամբ Ռ. դուռը նշանակելու էր եվրոպացի մեկական գեներալ-տեսուչ, որը հսկողություն էր իրականացնելու տվյալ հատվածի վարչության, արդարագրության և ոստիկանության վրա։ Անհրաժեշտության դեպքում գեներալ-տեսուչների պահանջով նրանց տրամադրվելու էին ռազմական ուժեր՝ հատվածներում կարգը պահպանելու համար։ Գեներալ-տեսուչներն իրավասու էին իրենց պաշտոններին չհամապատասխանող բոլոր աստիճանավորներին ազատելու կամ համապատասխան անձանց նշանակելու ստորին աստիճանավորների թափուր պաշտոններում և բարձր պաշտոնների թեկնածուներին ներկայացնելու սուլթանի հաստատմանը։ Հողային վեճերը վճռվելու էին գեներալ-տեսուչների անմիջական հսկողությամբ։ Գեներալ-տեսուչների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ առավել մանրակրկիտ հրահանգները մշակվելու էին նրանց նշանակումից հետո և անմիջական մասնակցությամբ։ Գեներալ-տեսուչների հետ կնքած երկարաժամկետ (10-ամյա) համաձայնագրերը, եթե ինչ-որ պատճառով կորցնեին իրենց ուժը, ապա Ռ. դուռը վերստին պետք է դիմեր տերությունների աջակցությանը։

1914 թ. համաձայնագիրը բովանդակում էր նաև այլ կարևոր հոդվածներ։ Այսպես, «համիդիե» զորագնդերը վերակազմվելու էին պահեստային հեծելազորի։ Նրանց գեներալները պահվելու էին ռազմապահեստներում և բաժանման էին ենթակա միայն զորահավաքի կամ զորախաղերի դեպքում։ Բոլոր օրենքները, հրամանագրերն ու կառավարական հաղորդումները յուրաքանչյուր հատվածում ենթակա էին տեղական լեզուներով հրատարակման։ Յուրաքանչյուր ժողովուրդ առանց որևէ արգելքի կարող էր պահել մասնավոր դպրոցներ։ Այնուհետև մինչև բնակչության վերջնական մարդահամարը, որ նախատեսվում էր կատարել մեկ տարվա ընթացքում, գեներալ-տեսուչների հսկողությամբ, Վանի և Բիթլիսի նահանգների համար, ընդհանուր ժողովում ճանաչվում էր մահմեդականների ու քրիստոնյաների հավասար ներկայացուցիչների սկզբունքը։ Նույնը նաև էրզրումի նահանգի համար, եթե այնտեղ մարդահամարը չավարտվեր մեկ տարվա ընթացքում։ Սեբաստիայի, Խարբերդի և Դիարբեքի նահանգների համար անհապաղ մտցվում էր ընտրությունների համապատասխան համակարգ։ Կողմերի հավասարության սկզբունքը կիրառվելու էր երկու հատվածներում, ոստիկանության հաստիքային պաշտոնները բաշխելիս¹։ Ոչ միայն թուրքական կառավարության, այլև առաջին հերթին

¹ Сборник дипломатических документов. Реформы в Армении. 26 ноября 1912 г.— 10 мая 1914 г., Петроград, (այսուհետև՝ Оранжевая книга), № 147, с. 162—165, Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 534—535։

Թուրքիային հովանավորող Գերմանիայի դիմադրության, ինչպես նաև Ռուսաստանի դաշնակիցների՝ Անգլիայի ու Ֆրանսիայի երկակի դիրքի պայմաններում, 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը ցարական Ռուսաստանի քաղաքական խոշոր հաջողությունն էր։ Միաժամանակ ակնհայտ էր, որ նոր համաձայնագիրը, չնայած ռուսական դիվանագիտության գործունե ազդեցության, զգալիորեն զիջում էր ռուսական սկզբնական նախագծին, որը 1913 թ. ապրիլին կազմել էր Կոստանդնուպոլսում ռուսական դեսպանության առաջին թարգմանի պաշտոնակատար Ա. Մանդելշտամը²։ Պետերբուրգ հղած իր հեռագրում Գուկկիչը գրում էր. «Դիմելով հունվարի 26-ի ակտին, անշուշտ, պիտի ընդունել, որ այն հայերին չի վերապահում ինքնավարության այն ընդարձակ իրավունքները, որոնք նրանց համար ցանկանում էր ապահովել ռուսական սկզբնական նախագիծը։ Գններալ-նահանգապետի գլխավորությամբ մի նահանգում բոլոր հայաբնակ տեղանքները միավորելու մտադրության փոխարեն հարկ եղավ բավարարվել երկու հատվածների կազմավորմամբ... Հարկ եղավ նաև հրաժարվել ռուսական նախագծի մի քանի այլ կետերից»³։

Բարդ էր եվրոպական տերությունների կողմից Արևմտյան Հայաստանի երկու հատվածների գններալ-տեսուչների պաշտոնների թեկնածուների վճռման հարցը։ Միանգամայն ակնհայտ էր, որ տերություններից ոչ մեկը մրցակից մյուս տերությանը թույլ չէր տա Բ. դռանը պարտագրելու իր դրածո-թեկնածուներին այդչափ պատասխանատու պաշտոններում։ Ռուսաստանի կառավարող շրջանակները նման իրավիճակում գտնում էին, որ լավագույն վճիռը կլինի գններալ-տեսուչների թեկնածուների որոնումն այնպիսի շեղոք տերությունների ներկայացուցիչների մեջ, ինչպիսիք էին Բելգիան, Հոլանդիան, Դանիան կամ Շվեյցարիան։ Ընդ որում նախապատվությունը տրվում էր Բելգիայի ներկայացուցիչներին։ Հենց այդ ուղղությամբ էին գործում ռուսական դիվանագետները, ինչպես նաև Եվրոպայում հայկական պատվիրակությունը գլխավորող Պողոս Նուբար փաշան⁴։ Մյուս տերությունները համաձայն էին Ռուսաստանի առաջարկության ընդհանուր կառուցվածքին։ Սակայն տարբեր էր նրանց ընտրությունը շեղոք երկրի հարցում։ Այսպես, Գերմանիան նախապատվություն տալիս էր Հոլանդիայի կամ Շվեյցարիայի, Անգլիան՝ Հոլանդիայի, Ֆրանսիան՝ Նորվեգիայի ներկայացուցիչներին⁵։

Բելգիայի ներկայացուցիչներին ռուսական դիվանագիտության տված նախապատվությունը չխրախուսեց նաև Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանը։ 1914 թ. հունվարի կեսին, դիմելով Ռուսաստանի իշխող շրջաններին, պատրիարքարանը շեշտեց, որ անհաշող կլինի գններալ-տեսուչների ընտրությունը բելգիացիներից և շվեյցարացիներից։ Մատնանշվում էր, որ նկատի ունենալով Թուրքիայում այդ երկրների առևտրական ու տնտեսական զգալի շահերը, նրանց գններալ-տեսուչների համակրանքը լիովին կարող է հակվել թուրքերի կողմը։ Պատրիարքարանը նախապատվությունը տալիս էր հուլանդացիներին, դանիացիներին, նորվեգացիներին և շվեդներին, հուլանդացիներին բելգիացիների համեմատ տված իր նախապատվությունը հիմնավորում էր նաև այն բանով, որ «գաղութներում առաջինների վարչակարգը երբեք տեղիք չի տվել այն կշտամբանքներին, որոնց արժանացել են բելգիացիները Կոնգոյում»⁶։ Մի քանի օր անց, գններալ-տեսուչների պաշտոններում համապատասխան թեկնածուների որոնման գործում Պողոս Նուբար փաշայից տեղեկանալով նրա ձեռնարկած քայլերի մասին, պատրիարքարանը, ռուսական

² Архив внешней политики России ИДУ МИД СССР (այսուհետև՝ АВПР), ф. Политический архив, 1913, д. 3467, л. 102—142. Տե՛ս նաև Оранжевая книга, с. 61—69.

³ АВПР, ф. Политический архив, 1913, д. 3465, л. 148—149.

⁴ Центральный государственный исторический архив (այսուհետև՝ ЦГИА) Арм. ССР, ф. 57, оп. 5, д. 58, л. 8. Տե՛ս նաև «Новое время», 11. 1. 1914.

⁵ Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительства, 1878—1917, серия 3, т. 1, М., 1931, № 284, с. 354.

⁶ Նույն տեղում, № 71, էջ 79, № 177, էջ 214.

դիվանագիտության իրազեկության մեջ, Պողոս Նուբար փաշային հրահանգեց մեկնել Հաագա՝ «գտնելու նրանց, ովքեր իրենց պաշտոնական դիրքով ու փորձով կարող էին հաջողությամբ իրագործել իրենց վրա դրվող պատասխանատու խնդիրը»⁷։ Պողոս Նուբար փաշան հունվարի 21-ին Փարիզում, հունդական դեսպանատանը դիմեց Հոլանդիայի արտաքին գործերի մինիստրությանը⁸։

Լավ հասկանալով իրադրության ամբողջ բարդությունը, Բ. դուռն իր առաջ նպատակ դրեց տարաձայնություններ առաջացնել տերությունների միջև և դրանով իսկ բացառել նրանց միասնական գործողությունների հնարավորությունը։ Հունվարի վերջին Կոստանդնուպոլսում վեց տերությունների հետ մասնավոր զրույցներում մեծ վեճեր Սալիդ Հալիմ փաշան առաջարկեց, որ տերություններից յուրաքանչյուրը գեներալ-տեսուչների պաշտոնների երկուական թեկնածու առաջադրի⁹։ Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի դեսպանները, խրախուսելով Սալիդ փաշային, Ռուսաստանի հավատարմատար Կ. Գուլկևիչին հայտարարեցին, որ այդ դեպքում «Բարձր դուռն վրա ճնշում գործադրելու պատկերացումը չի կրելու չափազանց ակնհայտ բնույթ»¹⁰։

Կոահելով թուրքական կառավարության մտադրությունը, Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Ս. Սազոնովը հունվարի 30-ին Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում, Ավստրո-Հունգարիայում և Իտալիայում ռուսական դեսպաններին հանձնարարեց հայտարարել, որ ռուս-թուրքական համաձայնագրով և Ռուսաստանի հաստատ համոզմամբ գեներալ-տեսուչների պաշտոններում թեկնածուների անունները նախ անպայման պիտի հաստատվեն տերությունների հետ համատեղ, այնուհետև արդեն ներկայացվեն Բ. դուռնը¹¹։ Փետրվարի 4-ին Անգլիայում ռուսական դեսպան Բենկենդորֆը հեռագրով տեղեկացրեց Սազոնովին, որ Անգլիայի արտաքին գործերի մինիստր է. Գրեյը սկզբունքորեն բաժանում է նրա տեսակետը տվյալ հարցում¹²։ Բայց անսպասելիորեն համառ դիմադրություն ցուցաբերեց Ֆրանսիան։ Հունվարի 13-ին Ֆրանսիայում ռուսական դեսպան Ա. Իզվոլսկու հետ զրույցում Ֆրանսիայի մինիստրների խորհրդի նախագահ և արտաքին գործերի մինիստր Դումերգը հայտարարեց, որ հետագա սրություններից խուսափելու համար առավել ընդունելի է համարում թուրքական կառավարության առաջարկությունը։ Նա միաժամանակ մատնանշեց, որ նույնիսկ նման իրավիճակում Թուրքիայում Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դեսպանները, ըստ նախնական համաձայնության, լիովին կարող են անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել երկու որոշյալ թեկնածուներին¹³։

Ֆրանսիայի համառությունը խիստ դժգոհություն առաջացրեց Ռուսաստանի կառավարող շրջաններում։ Սազոնովի հանձնարարությամբ Իզվոլսկին Ֆրանսիայի արտաքին գործերի դեպարտամենտի դիրեկտոր Մարթերին աներկմիտ հայտարարեց, որ Ռուսաստանի անմիջական շահերին հակառակ ընթացող Ֆրանսիայի ամեն մի նախաձեռնությունն անցանկալի է, իսկ Բ. դուռնը ներկայացվող Դումերգի առաջարկած կարգը միանգամայն անընդունելի է, քանի որ թուրքական կառավարության վերջնական ընտրությունը կարող է լինել ավելի քան անսպասելի¹⁴։ Ուժգին ճնշման ներքո Փարիզի կառավարությունը հարկադրված եղավ զիջել։ Փետրվարի 17-ին Իզվոլսկու հետ զրույցում Դումերգն իր համաձայնությունը հայտնեց չորս-հինգ թեկնածուների ընդհա-

⁷ Նույն տեղում, № 177, էջ 213։

⁸ Van der Dussen, J. William. The Question of Armenian Reforms in 1913—1914. «The Armenian Review», vol. XXXIX, Spring, 1986, № 1, p. 26.

⁹ Оранжевая книга, № 150, 151, 153, с. 175—176; «Հորիզոն», 31. I. 1914։

¹⁰ Оранжевая книга, № 150, с. 175.

¹¹ Նույն տեղում, № 152, էջ 176։

¹² Նույն տեղում, № 154, էջ 177։

¹³ Международные отношения в эпоху империализма..., т. 1, № 333, с. 445.

¹⁴ Նույն տեղում, էջ 446։

նուր ցանկից Բ. ղռանը ներկայացվող տարբերակին: Բարձր ղռանը ներկայացվող կարգը հետևյալն էր. ընդհանուր ցանկը նախապես կազմվելու էր Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի մասնավոր համաձայնության հիման վրա: Այնուհետև Ռուսաստանը պարտավոր էր այդ ցուցակը ներկայացնել բոլոր վեց տերությունների քննարկմանը: Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի կողմից անուններով համալրված ցուցակը ներկայացվելու էր Բ. ղռանը: Տվյալ ներկայացման անվերապահ պայմանը ցանկում նշված թեկնածուների ընդունումն էր բոլոր տերությունների կողմից¹⁵: Փարիզի կառավարությունը ևս պատրաստակամություն հայտնեց անհրաժեշտ աջակցություն ցույց տալու ռուսական դիվանագիտության գործողություններին¹⁶:

Փետրվարի վերջին, իր դաշնակիցների գիտությունը ու համաձայնությամբ գործող Վիեննայի կառավարության հանձնարարությամբ, Թուրքիայում ավստրո-հունգարական դեսպան և դիվանագիտական կորպուսի ղուայն Պալ-լավիլինին ռուսական դեսպան Մ. Գիրսին առաջարկեց հրավիրել Թուրքիայում վեց տերությունների դեսպաններին՝ գեներալ-տեսուչների պաշտոններում թեկնածուների հարցը համատեղ քննարկելու համար: Հասկանալով, որ այդ առաջարկության նպատակն է շեղել Ռուսաստանին՝ բռնած ուղուց և դեսպանությունների մակարդակում առաջ բերել անվերջ վիճարանություններ, Գիրսը հայտարարեց, որ նման խորհրդակցության անհրաժեշտություն չի տեսնում, քանի որ թեկնածուներ պետք է առաջադրեն տերությունների կառավարությունները և ոչ թե Թուրքիայում նրանց դեսպանները¹⁷:

Այսպիսով, Բ. ղռան բանսարկությունները, Ֆրանսիայի հետ փոքր միջադեպը, ինչպես նաև Ավստրո-Հունգարիայի առաջարկությունը ռուսական դիվանագիտությանն առավել ևս համոզեցին այն բանում, որ անհրաժեշտ է արագացնել ընդհանուր ցանկի կազմման գործը, այսպես այն կարող է լրիվ տապալվել: Յարական կառավարության հապճեպ կազմած ցանկը բովանդակում էր միջազգային բազում բանակցությունների հետևանքով պարզորոշված հետևյալ հինգ թեկնածությունները. երկու հուլանդացի՝ Արևելյան Հնդկաստանում Հոլանդիայի մշտական ներկայացուցչի տեղակալ Վեստենենկը և հուլանդական ռազմական միևիստրության գլխավոր քարտուղար Դուրմանը, երկու բելգիացի՝ գեներալ-մայոր Դեգիզը և բելգիական Կոնգոյի նախկին փոխնահանգապետ Հենրին, մի նորվեգացի՝ նորվեգական ռազմական միևիստրության գլխավոր քարտուղար Հոֆֆը: Կազմված ցանկն անհապաղ հանձնվեց Լոնդոնի ու Փարիզի կառավարություններին: Մարտի 10-ին Գիրսը հեռագրեց Սազոնովին, որ Անգլիայի ու Ֆրանսիայի դեսպաններն իրենց կառավարությունների համաձայնությունն են արտահայտել թեկնածությունների նշանակման կապակցությամբ¹⁸: Այնուհետև ցանկը ներկայացվեց Օռլանդի տերությունների քննարկմանը: Վիեննայի ու Իտալիայի կառավարությունները շտապ խնդրեցին Բեռլինի կարծիքը: Վերջապես, մանրակրկիտ քննարկումից հետո, հավանությունը տրվեց¹⁹: 1914 թ. մարտի 24-ին, տերությունների ընդհանուր համաձայնությամբ, Պալլավիլինին, որպես դիվանագիտական կորպուսի ղուայն, լիազորվեց Բ. ղռանը հանձնելու երկու հատվածների գեներալ-տեսուչների պաշտոններում արդեն համաձայնեցված հինգ թեկնածուների ցանկը²⁰:

Նվրոպական տերությունների երաշխավորած այդ հինգ թեկնածության քննարկումն էլ թուրքական կառավարության կողմից դարձավ Արևմտյան Հայաստանում ռեֆորմների «կենսագործման» սկիզբը: Ի վերջո, 1914 թ. ապրիլի

¹⁵ ЦГИА АрмССР, ф. 57, оп. 5, д. 65, л. 3. Տե՛ս նաև «Международные отношения в эпоху империализма...», т. 1, № 360, с. 475.

¹⁶ Международные отношения в эпоху империализма..., т. 1, № 360, с. 475.

¹⁷ Նույն տեղում, հ. I, № 437, էջ 581—582:

¹⁸ Оранжевая книга, № 155, с. 177.

¹⁹ Նույն տեղում.

²⁰ Նույն տեղում, № 156, էջ 177:

2-ին Բ. դռան ընտրությունը կանգ առավ հուլանդացի Վեստենենկի և նորվեգացի Հոֆֆի վրա²¹։ Տարօրինակ էր այն փաստը, որ մի դեպքում պատրիարքարանի և թուրքական կառավարության դիրքորոշումները, կարելի է ասել, համընկնում էին։ Երկուսն էլ բելգիացիների թեկնածության հակառակորդներ էին։ Բայց արմատապես տարբեր էին պատճառները։ Ի լուր ամենքի, թուրքերը հայտարարում էին, որ չեն ցանկանում, որ «Թուրքիայի մահմեդականները Կոնգոյի նեգրերի հետ դրվեն նույն աստիճանի վրա»²², իսկ իրականում թուրքական կառավարությունը ձգտում էր Պետերբուրգին ցուցադրել իր ամեն ինչում անհաշտ ընդդիմությունը։ Ինչպես տեսնում ենք, ռուսական դիվանագիտությունը, ասես, Բ. դռան ընտրությունից գոհանալու հատուկ պատճառ չունեի։ Այնուհանդերձ ռուսական դիվանագետները, մասնավորապես Իզվուսկին, Պետերբուրգ հղած իրենց հաղորդումներում փորձում էին պնդել, որ Վեստենենկն ու Հոֆֆը լավ են հասկանում, թե իրենք ում ներկայացուցիչներն են, ուրեմն և նրանք կունենան համապատասխան դիրքորոշում²³։

1914 թ. մայիսի սկզբին Կոստանդնուպոլիս ժամանեցին Վեստենենկն ու Հոֆֆը, որոնց անսքող գոհունակությամբ և լիովին հասկանալի ոգևորությամբ դիմավորեցին հայ հասարակական-քաղաքական շրջանների բազմաթիվ ներկայացուցիչներ։ Այսպես, դաշնակցական գործիչ Իշխանը Հոֆֆին ողջունեց հետևյալ խոսքերով. «Դուք մեր հինգ-վեց տարիների սպասած ներկայացուցչությունն եք»²⁴։ Սակայն շուտով հողմացրիվ եղավ նորեկ ընտրյալների իրազեկության պատրանքը։ Դաշնակցություն կուսակցության հեղինակավոր անդամ, դոկտոր Զավրիկը հանդիպում ունեցավ Վեստենենկի և Հոֆֆի հետ։ Զրույցների ընթացքում պարզվեց, որ թե Վեստենենկը և թե Հոֆֆը չնչին պատկերացում իսկ չունեն ոչ Թուրքիայի, ոչ էլ դրա պետական կառավարման մակարդակի ու ձևի մասին։ Իսկապես, անհանդուրժելի այն էր, որ այդ մարդկանց խոսքերում (որոնք չէին քողարկում իրենց անիրազեկությունը հայկական հարցում) զգացվում էր լիակատար անտարբերություն հայերի ու նրանց ճակատագրի հանդեպ²⁵։ Ինչպես դառնությամբ արձանագրում է Զավրիկը, «ոչ արծիվներ, ոչ էլ առաջնակարգ դեմքեր են»²⁶, ահա թե եվրոպական դիվանագիտությունը և նրա սպասավորներն ում ձեռքն էին վստահել տառապած արևմտահայ բնակչության ճակատագիրը։

1914 թ. մայիսի 10-ին Կոստանդնուպոլսում Վեստենենկը և Հոֆֆն իրենց պայմանագրերը համաձայնեցրին Թուրքիայի ներքին գործերի մինիստր Թալեթ փաշայի հետ։ Վեստենենկը նշանակվեց «Հյուսիսային» իսկ Հոֆֆը՝ «հարավային» հատվածի գեներալ-տեսուչ։ Առաջինը մնալու էր Սեբաստիայում, երկրորդը՝ Վանում²⁷։ Սեբաստիայի ընտրությունն արդեն հակասում էր հայերի պահանջին. նրանք կենսական անհրաժեշտություն էին համարում տվյալ հատվածի գեներալ-տեսուչի տեղավորումն էրզրումում²⁸։ Ավելին, ըստ համաձայնագրի, ստացվում էր, որ ընտրված գեներալ-տեսուչները, որոնց թեկնածությունը այլոց թվում երաշխավորել էր Եվրոպան, վերածվում էին Բ. դռան արբանյակներով շրջապատված թուրքական աստիճանավորների²⁹։

²¹ Նույն տեղում, № 157, էջ 178, И. Н. Апанов, Судьба Армении, М., 1918, с. 20. Տե՛ս նաև Henri Morgenthau, Les Faits les plus horribles de l'Histoire, Paris, 1918, p. 6.

²² Van der Dussen, J. William, նշվ. աշխ., p. 26.

²³ ЦГИА АрмССР, ф. 57, оп. 5, д. 65, л. 53. Տե՛ս նաև H. Roderic Davison, The Armenian Crisis, 1912—1914, New York, 1948, p. 24.

²⁴ «Հայրենիք», 1955, № 1, էջ 76։

²⁵ ЦГИА АрмССР, ф. 57, оп. 5, д. 28, л. 143.

²⁶ Նույն տեղում, ք. 79։

²⁷ Оранжевая книга, № 159, с. 180. Տե՛ս նաև Fridtjof Nansen, Armenia and the Near East, London, 1928, p. 297.

²⁸ ЦГИА АрмССР, ф. 57, оп. 5, д. 65, л. 25.

²⁹ Նույն տեղում, գ. 28, ք. 145։

դառնում «թուրքական կառավարության կամքի կույր կամակատարներ»³⁰, Ըստ երևույթին, այդ կացությունը բոլորովին էլ չէր հուզում Վեստենենկին, երբ նա հայտարարեց, թե քանի որ իրեն հրավիրել է սուլթանը, ուրեմն ինքը նրա աստիճանավորն է և պատրաստ է ենթարկվելու նրան³¹։ «Այսպես կոչված «գեներալ-տեսուչների հրահանգները», — գրում է «Կապկադոկոյն սլովո» թերթը, — երևացին մայիսի 10—23-ին և շանթահարեցին հայ հասարակությանը։ Այդ հրահանգներում գեներալ-տեսուչները եվրոպացի հսկիչներից վերածվեցին թուրքական հասարակ աստիճանավորների, բացի այդ, կորցնելով իրենց ֆունկցիաների զգալի մասը»³²։ Ականավոր կուսակցական, պետական և ռազմական գործիչ Ա. Մյասնիկյանն այդ իրավիճակի մասին գրում է. «Վարչական հսկողությունը չի կարող որևէ էական նշանակություն ունենալ... Ի՞նչ մնաց տեսուչներից։ Սոսկ անունը։ Նա ի՞նչ կարող է անել։ Ռոճիկ ստանալ»³³։

Հայ հասարակական-քաղաքական շրջանակներում սաստկանում էր անհանգստությունը։ Ակնհայտ էր, որ Բ. դուռը, անդադար տրտնջալով «պետությունների» իր համար նվաստացուցիչ միջամտություններից»³⁴, պատրաստվում էր ռեֆորմներն իրագործել «թուրքավարի», իր ըմբռնմանն ու պատմական դիպվածին համապատասխան։ Իրականում զա նշանակում էր, որ կգործադրվեն բոլոր միջոցները, որպեսզի 1914 թ. հունվարի 26-ի ռեֆորմները մնան թղթի վրա։ Իր հուշերում երիտթուրքերի պարագլուխներից Զեմալ փաշան անսքող խոստովանում էր. «Հայկական ռեֆորմների հարցում մենք ձգգտում էինք ազատվել այն պարտավորություններից, որոնք մեզ պարտագրեցին ռուսները...»³⁵։ Բ. դուռն դիրքորոշման մասին լիակատար պատկերացում է տալիս 1914 թ. հունիսին Կոստանդնուպոլսից Պետերբուրգ հղած հայերի նամակը։ Նամակի հեղինակները նշում են, որ թուրքական կառավարության նպատակն է վարկաբեկել, նորամուծությունները և վիժեցնել ռեֆորմները, ցուցադրելով, թե եվրոպան, հատկապես Ռուսաստանը, անկարող են դրանք ուժով ներմուծել, գեներալ-տեսուչներին դնելով անօգնական վիճակում՝ լիովին չեզոքացնել նրանց գործունեությունը, որին նպաստում է եվրոպայի լուծությունը, վերջապես, չեզոքացնելով հայերի գործունեությունը, համապատասխանաբար շուտ տալ ռեֆորմները, այն ուղղելով նրանց զանգվածային կոտորածի հունը»³⁶։

Մտահոգված հայերի մեջ ուժեղացող անհանգստությամբ, Կոստանդնուպոլսում ռուսական դիվանագետները, հնարավորություն չունենալով որևէ բան նախաձեռնելու, փորձում էին հանգստացնել նրանց, համոզելով, որ թույլ չեն տա, որպեսզի Բ. դուռն «իր հայեցողությամբ խաղա գեներալ-տեսուչների հետ»³⁷։ Պետերբուրգում Սազոնովը դարձյալ հայտարարեց. «Դեպքերի ծավալումը, անշուշտ, մենք թույլ չենք տա, և դրա համար հնարավորություն ունենք»³⁸։ Սակայն որոշակի գործերով չհիմնավորված հայտարարությունները հազիվ թե օգտակար լինեին։

Ստեղծված մոռյալ իրադրության մեջ հայ քաղաքական կուսակցությունների կառավարող շրջանակները վճռեցին հրաժարվել միջկուսակցական գրծություններից և գործել միացյալ ջանքերով։ Հրապարակվեց համատեղ հա-

³⁰ Papazian, S. Berta, The Tragedy of Armenia. A Brief Study and Interpretation, Boston-Chicago, 1918, p. 99.

³¹ ЦГИА АрмССР, ф. 57, оп. 5, д. 28, л. 143.

³² «Кавказское слово», 16. IX. 1914.

³³ А. Ф. Мясникян, Избранные произведения, Ереван, 1965, с. 69.

³⁴ ЦГИА АрмССР, ф. 57, оп. 5, д. 58, л. 36.

³⁵ Djemal Pasha, Memories of a Turkish Statesman, 1913—1919, London, 1922, p. 233.

³⁶ ЦГИА АрмССР, ф. 57, оп. 5, д. 28, л. 70—71.

³⁷ Նույն տեղում, ք. 131.

³⁸ Նույն տեղում, գ. 53, ք. 17.

տուվ դիմում, որը կոչ էր անում ազգային կենսունակ ու գիտակից բոլոր ուժերին՝ ծառայել հայրենիքին ու հայ ժողովրդին, նրա սահմանադրական և ազգային իրավունքների ամրապնդմանը³⁹։ Բայց անգամ հայ քաղաքական կուսակցությունների համատեղ գործունեությունը հազիվ թե որևէ բան կարող էր փոխել։ Սկսված առաջին համաշխարհային պատերազմը վերացրեց ռեֆորմների իրագործման հարցը Արևմտյան Հայաստանում՝ բոլոր գործերը դնելով վերջնական փակուղու մեջ։ Օգտվելով համաշխարհային քաղաքական ճգնաժամից, գերմանական դիվանագիտությանը առաջնորդող Թուրքիան դե ֆակտո ջնջեց Արևմտյան Հայաստանում ռեֆորմների մասին 1914 թ. հունվարի 26-ին Ռուսաստանի հետ կնքած համաձայնագիրը։ Թուրքական կառավարությունն անհապաղ մերժեց նաև գեներալ-տեսուչներ Վեստենենկի և Հոֆֆի հետ կնքած պայմանագրերը։ Նրանք դեռևս չէին հասցրել Կոստանդնուպոլսից տեղափոխվել Սեբաստիա և Վան, երբ երկուսին էլ երկրից շտապ հեռանալու պահանջ ներկայացվեց⁴⁰։

Այսպիսով, 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը, հայկական հարցի վերաբերյալ նախնիքաց բազմաթիվ որոշումների ու համաձայնադրերի նման, սկսած 1878 թ. Սան-Ստեֆանոյի պայմանագրից, «առաջ է քաշվել, բայց այդպես էլ չի իրագործվել»⁴¹։ Միջազգային իրավունքի ուժը դարձյալ մնաց անզոր։ Ավելին, 1915 թ. ապրիլին սկսվող հայկական հարցի «լուծումը»՝ երիտթուրքական կառավարությունը 1915—1916 թթ. սառնասրտորեն իրագործեց Թուրքիայի հայ բնակչության ցեղասպանության հանցավոր ծրագիրը, որին զոհ դարձան 1,5 միլիոն հայեր։

ИЗ ИСТОРИИ ДИПЛОМАТИЧЕСКОЙ БОРЬБЫ ВОКРУГ РЕФОРМ В ЗАПАДНОЙ АРМЕНИИ

Р. А. КОДЖОЯН

Резюме

В процессе подписания окончательного русско-турецкого соглашения о реформах в Западной Армении от 26-го января 1914 г. на повестку дня встал вопрос об определении великими державами кандидатур на посты генерал-инспекторов двух предполагаемых секторов. Вопрос являлся крайне сложным, ибо было очевидно, что ни одна из держав не позволит другой державе-сопернице навязать Порте своих кандидатов-ставленников на столь ответственные посты. В результате активных действий русской дипломатии Порте все же был представлен на выбор общий список из пяти кандидатур. Турецкое правительство, изначально стремившееся сорвать проведение любых реформ в Западной Армении, формально выбрало двух кандидатов, однако фактически тут же свело к нулю их инспекторские полномочия. Вскоре, воспользовавшись условиями начавшейся Первой мировой войны, младотурецкое правительство не только аннулировало подписанное с Россией январское соглашение, но и приступило к окончательному «решению» армянского вопроса путем массового истребления армян.

³⁹ Е. К. Саркисян, Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв., Ереван, 1972, с. 297.

⁴⁰ Б. А. Борьян, Армения. Международная дипломатия и СССР, ч. I, М.—Л., 1928, с. 289; Տե՛ս նաև D. Marquart, L'Origine et la réconstitution de la nation arménienne, Paris, 1919, p. II.

⁴¹ История дипломатии, т. 2, М., 1963, с. 761.